


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՅՏԱՆԵ

ԵՊԻՊՏՈՍ

Յարկան դր. ոպ 30

ԱՐՏԱՍՏՄԱՆ

Յարկան գրանգ 10

Բաժանորդ ՅԱԵԼՈՒՍ ԵՆԵՐԱ փոխարէն վերաբերէ զերձ պիտի ըլլան .

Ձի հրատարակուած ձեռագիրները ետ չեն տրուիր :

ԱԶԳԱՅԻՆ . ԳՐԱԿԱՆ . ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Թե՛ ԱՐՇԱՆՈՅՄԻ եւ թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ ներքին խնդրոց հարաւար պէտք է դիմել ներքին գործերու նախարարին , որ է՝

Բաժանորդագրութիւնը կանխիկ է . իսկ ծանուցումները կ'ընդունուին մասնաւոր նախաձեռնութեամբ :

ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՒՊՈՒՆԵՐ

ԿԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Յօդուածագիրները ուղղակի պատասխանուող են իրենց գրածներուն

ZUSC 20 ՓԱՐԱ ՈՂԶ

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ

ՍՓԻՆՔՍ

ՀԱՅ ԴԷՄՔԵՐ ՈՒ ԴԷՊՔԵՐ

ՅԻՍՈՒՆԻ ԶԱՓ ԼՈՒՍԱՍԻՊ ՊԱՏ. ԿԵՐԵՆՐՈՎ ԵՒ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՆՈ. ԹՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ :

Վաճառման արդիւնքին մէկ կարեւոր մասը պիտի յատկանայ բարեգործական հաստատութեան մը . Հաւանորէն Հ. Բ. Բ. Միութեան , որ Հայկական միակ վտանգելի հաստատութիւնն է :

Տպագրութիւնը պիտի աւարարի մէկ տարիէն :

Կը պատրաստէ Տ. Ե. Թորոսեան մէկ քանի ուրիշներու բարոյական օժանդակութեամբ :

ԵԳԻՊՏԱԿԱՅ ԳՈՐԾԵՐԸ

ՎԵՐՁԻՆ ՎԵՑ ՏԱՐՈՒԱՆ ՇՐՁԱՆԻՆ

1903 — 1908

Ա. Եգիպտական Մամուլը. - Բ. Միջինկաներ - Գ. Անկեսացած դեմքեր - Դ. Կրթական հաստատութիւնք եւ Բարեգործական ընկերութիւնք - Ե. Ազգային Առաջնորդարանք - Զ. Վերջաբան :

Բ.

ՄԻԹԻՆԿՆԵՐ

(Շարունակութիւն նախորդ թիւէն)

Ինչպէս նախորդ թիւով կը գրէինք , Աղէքսանդրի տեղի ունեցած միթիւնը կաթողիկոսին խրկուելու համար որոշմանը մը եւ հեռագիր մը պատրաստեց :

ԱՐՈՇՄՆԱԿԻՐԸ

Աղէքսանդրիոյ հայերը ամբողջ եկեղեցական գաղութ հանդերձ , տեղուոյ Ս. Եկեղեցւոյն մէջ համախմբուած , միաձայնութեամբ իրենց ամենախորին վիշտը կը յայտնեն Ռուսիոյ մէջ Հայ եկեղեցւոյ կալուածներուն Պետական մատակարարութեան խնդրոյն առթիւ :

Վստահ են թէ Ամենայն Հայոց Ս. Հայրապետը , հպատակելով իւր Աստուածաւանդ պարտականութեան ,

պաշտպան պիտի կանգնի եկեղեցւոյ դարաւոր իրաւանց , եւ կը սիրեն հաւատալ թէ՛ ուղղակի դիմումով առ Օգոստոսիան Զարն Ռուսիոյ՝ պիտի յաջողի ընդունիլ նորին Վեհափառութեան Բարձրագոյն հրամանն անձեռնմխելի թողու եկեղեցապատկան կալուածները ո՛հք ամեն երկիրներու հայոց սեփականութիւնն են եւ որոց մատակարարութեան իրաւունքը Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ անկախութեան անհրաժեշտ պայմանն է :

ՀԵՌԱԳԻՐԸ

Աղէքսանդրիոյ հայերը , եկեղեցւոյ մէջ համախմբուած , վստահ որ Զերդ Ս. Օձուրիւնն , ըստ իր Աստուածաւանդ պարտականութեան , պաշտպան պիտի կանգնի եկեղեցւոյ դարաւոր իրաւանց , կը յուսան որ՝ ուղղակի դիմումով առ Օգոստոսիան Զարն՝ պիտի ընդունի Բարձրագոյն՝ հրամանն անձեռնմխելի թողու ամենայն հայոց սեփական եկեղեցապատկան կալուածները :

Բարեբախտաբար շատ երկար չի տեւեց իրաց այս տխուր վիճակը եւ 1905 Օգոստ. 14 ի Ուղղակի Ազգային Եկեղեցւոյ վերադարձուցաւ զբաւուած կալուածները : Միայն թէ հաւանական չ'երևիր որ կալուածոց այս վերադարձը նոր չունէր մը նշանակէ Ռուսական քաղաքական ուղղութեանը մէջ դէպի Հայաստան պահպարտ տեսութե ժամանակը տակաւին հասած չ'էր , եւ ատով ուղեց գրգռեալ մտքերը հանդարտեցնել . այս վերադարձը լոկ տեսակ մը պայմանաժամի յետաձգում էր : Կառավարութեան այս փորձերէն հայերս բաւական սթափեցանք եւ հիմայ ապագայ նմանօրինակ անակնկալներու համար գէթ ժամանակ ունինք խորհելու ձեռք առնուելիք միջոցներուն վերայ :

Միթիւնները անպակաս են Եգիպտոսի մէջ , յաջորդ տարին - 1904 ին - Հայաստանէ շարդի լուրեր կը հասնին , ողջակէզը այս անգամ Մըշոյ դաշտի Հունան գիւղն է . լուրին ձգած տպաւորութիւնը կարելի է երեւակայել : Գաղութը կը յուզուի

եւ կը շարժի ալ . Ապրիլ 10 ին Զատիկի Կիրակին արարողութեանց աւարտուածէն վերջ Աղէքսանդրիոյ եկեղեցին միթիւնկ մը կ'ըլլայ , եւ կը հեռագրուի Մեծ Պետութեանց Արտաքին Գործոց նախարարներուն՝ խնդրելով անոնց միջամտութիւնը հայկական շարժերու վերականգնող արգելիչութեան համար :

Ինչպէս շատ անգամներ , այս անգամ ալ Աղէքսանդրիոյ օրինակին կը հետեւի Գահիրէիցին , եւ կը կազմակերպէ իր կարգին նոյն նպատակաւ միջազգային միթիւնկ մը , որ տեղի կ'ունենայ Մայիս 2 ին «Վարիէթէ» թատրոնին մէջ՝ քուէի կ'ենթարկուի եւ կ'ընդունի օրակարգ մը՝ որով Մեծ Պետութեանց միջամտութիւնը կը խնդրեն Հայաստանի տառապանքներուն վերջ մը տրուելու համար :

Գ. ԱՆՀԵՏԱՑՆԻՍ ԴԷՄՔԵՐ

Ի. Գրական աշխատանքներ

1904 թ. վերջի քառորդին մեր գրական աշխատանքներէն երեք մահեր կ'ունենանք . Հոկտեմբեր 1 ին «ՀԱՅԵԼԻ» Երաթաթերթի խմբագիր Տիրան Փափազեանի , Դեկտեմբեր 19 ին Հայ լեզուի եւ գրադատութեան ուսուցիչ Միհրան Ասքանազի , եւ վերջապէս , մի քանի օրեր յետոյ , Դեկտեմբեր 22 ին ծերունի բանաստեղծ Սիմոն Ֆէլէկեանի մահերը :

Ասքանազի մահը տխուր անակնկալ մը եղաւ ինձ համար . ճշգիւ չեմ յիշեր իր մահէն քանի ամիսներ յառաջ էր երբ տեսայ զինքը հոս՝ Գահիրէ՝ կատարեալ առողջ վիճակի մէջ , դէթ արտաքին երեւոյթէն դատելով . եւ հիւանդութեանը լուրը չ'առած՝ մահուանը բոթը հասաւ : Պէրպերեանի առաջին ստեղծութիւնն էր . ունեցաւ Պօլիս իր փայլուն շրջանը , իր Գրագիտութեան զոյգ մը դասադիրքերը հրատարակած :

(1) Մանօթ . ԽՄԲ . Ֆէլէկեան

շատ աւելի փայլուն օրեր ունենալու սահմանուած էր , եթէ իր լրագիրը կ'իներ եւ նոյնչափ պատշաճաւանգ գերասանուհի աղջիկները , իրենց մօրը հետեւելով՝ անոր օրտին մէջ իրորունկ վերքեր չ'ընանային

տարակած տոնները մանաւանդ , ճանչցայ զինքը երբ Արամեան վարժարանը մեզ կը դասախօսէր եւ տակից ալ առաջ : Արտասահման տիրող կեանքի պայքարը , պայքար մը՝ որուն մէջ շատ անգամներ նպատակին հասնելու համար խտրիչ չեն դնելու գործածուելիք զէնքերու տեսակին մէջ , մաշած ըլլալու է Ասքանազի առողջ կազմը եւ զինքը կանուխէն գերեզման իջեցուցած :

Գաղով Ֆէլէկեանի , իր մահուամբ կ'անհետի անցեալ դարու դէմք մը , հինէն մնացած շահեկան նմայ մը : Պօլսէն մեկնելէս տարիներ վերջ երբ տեսայ զինքը հոս , նոյն այն Ֆէլէկեանն էր զոր ճաշցած էի մանկութեանս , բնաւ փոքուած չ'էր . խօսակցութեանը մէջ նոյն զուարթասրտը եւ մնացած էր նոյն երկրպագուն . . . Օղիին Ասքանազի չափ եւ անկից աւելի՝ Ֆէլէկեան ունեցած է իր փայլուն օրերը :

Բայց Ասքանազէ եւ Ֆէլէկեանէն աւելի Արփիար Արփիարեանի մահն է՝ 1908 ի սկիզբները տեղի ունեցած՝ որ զգալի պակաս մը կը թողու թրքահայ հրապարակագրութեան մէջ . իր եղբրական մահը՝ դաւաճան ձեռքերու կողմէ մութի մէջ սարդուած՝ աւելի կակածալի կ'ընէ իր կորուստը՝ ինչ վերապահումներ ալ որ ըլլուի յեղափոխական մարդուն համար , հակառակ այդ բոլորին կայ ու կը մնայ միշտ հրապարակագիրը , գրչի այդ վարպետը , որ կրցաւ այնքան յաջող էլեր արտադրել ցանցնուած քիչ մը ամենուրեք , ըլլա՛յ Պօլիս , ըլլա՛յ արտասահման : Այդ դրուածները ինքնին բաւականին պերճախօս են եւ անվիճելիօրէն իրեն կուտան վերջին քառորդ դարու հայ հրապարակագրութեան մէջ պատուոյ տեղերէն մէկը : Ունենալու չենք տկար յիշողութիւն եւ մեր քննադատութեանց մէջ գիտնալու ենք զանազանեւ նոյն անհատին մէջ մէկէ աւելի մարդերը :

Առաջին անգամ ըլլալով Գահիրէ ճանչցայ զինքը եւ ստեղծ զինքը կը տեսնէի Մթաւնտիտի սրճարանը՝ անբաժան իր թերթերէն , որոնց մէջ կային խտալականը , Քրքրանսականը , շատ անգամ Մշակը : Այդ թերթերու ծրարը երբեմն պատ-

կառուցել երևոյթ մը կառնէր, եւ պատահեցաւ երեկոյ մը որ երբ միտսին սրճարանէն կը վերադառնայինք, Վիու Պառլի առաջ երիտասարդ մը իրեն ներկայանալով դրամ ի ձեռին վիտայմզի և կամ Մաթէնի վերջին թիւը ուղեց գնել (2) Արփիար գլխի վարժ շարժումով մը բացատրական պատասխան տալով շարունակեցինք ճամբանիս, երիտասարդը զինքը լրացրած ճանաչեալ կարծած էր. վերջէն իրմէ իմացայ թէ՛ ասի առաջին անգամը չէ եղեր որ կը պատահէր. (3)

Արփիար որ այնքան փարած էր իր թերթերուն և ընտանի անուն մը շինած իրեն, նիւթական աննախանձելի վիճակ մը ունէր. բայց ինք որ աղքատ ապրեցաւ ունեցաւ սակայն փառաւոր թաղում մը. եթէ հրապարակագիրը իրաւունք ունէր հասարակութեանէ պահանջելու մահուանէն վերջ իրեն արժանի թաղում մը, նոյնքան իրաւունք ունէր որ իրեն ցոյց տրուէր այդ տաք վերաբերումը իրեն կենդանութեանը. թաղումին համար եղած ծախքին կէսը եթէ իր կենդանութեանը իրեն տրուելու ըլլար, ապահովաբար տարբեր վախճան մը ունենար Արփիար:

Թէ այդ համակրական ցոյցերը սր աստիճան անկեղծ էին, աստի ալ տարբեր հարց է:

II պաշտօնատեղ

Աղքատներու շայ գաղութը կորուստ մը ունեցաւ յանձին խառն գատարանաց Վերաքննիչ Ատենի խորհրդական Կարապետ պէտք Ռէյիլեանի մահուամբը, որ տեղի ունեցաւ 1903 նոյեմբեր 26 ին:

Բայց յաջորդ տարին Եգիպտոսի Հայութիւնը շատ աւելի ծանր կորուստ մը կրեց Տիգրան բաշայ տ'Ապրոյի մահուամբը: Բաշան 1904 Օգոստոս 1ին վախճանեցաւ Էփիան-Լէ-Պէնի մէջ, ի Զուիցերլան, ուր գացած էր օգտագործութեան համար թէպէտ Գահիրէէ մեկնած միջոցին արդէն առողջութիւնը խանդարուած էր և մտահոգութիւն իսկ կը պատճառէր զինքը շրջապատողներուն, բայց դարձեալ այսքան մօտ է՛ր սպասուէր վախճանը:

Տիգրան բաշայ որդին էր Սթէֆան Ապրոյի որ մեռաւ ի Նարբոյի Գահիրէէ ծնած և իր ուսմունքը Իտալիա առած էր: 56 տարեկան մեռաւ:

(2) Ծ. Խ. Ս. - Սիրելի Մէթոք Յար. Լ. Ս. Շամլըբան, ինչէ՞ն զիտես ի՞նչ այդ երիտասարդ օրսնախ մտքավառ քննան ուրիշներու կողմէ զբերուած չէր պարզ-է-գա՞ մը ուղեկու պատրուակաւ: Բայց ասոր ալ մօտան անցա՞ւ Այսպէս ընելով՝ ենթական զայրացնել և սիրտը վիրաւորել կոչուէր թերևս

(3) Ծ. Խ. - Անոր համար է անշուշտ որ Բիրամիտ Արփիարի ըստան առաւօտուն կը ծանոցանէր թէ՛ յուզումով մը մը սպանուած էր կուրի մը մէջ. յայտնուած լրագրութիւն

Տիգրան բաշայ Եգիպտոսի Ժամանակակից պատմութեան մէջ իր տեղը ունի. կառավարական կարգ մը պաշտօններ վարած է, վերջին անգամ 1891ին Արտաքին Գործոց նախարար անուանուեցաւ և վարեց այդ պաշտօնը մինչև 1894: Բրիտանական թեւաբովութիւնը Եգիպտոսի վրայ տարածուելէն ի վեր տեղական տարրին երկրին քաղաքական գործերուն մէջ ունենալիք գործունեութիւնը հետզհետէ կը նուազի, եւ Լոնտոնի Գահիրէն է որ իր ներկայացուցչին միջոցաւ և անոր հետ համախորհուրդ կը վարէ երկրին գործերը. ինչպէս կը տեսնուի, նախարար թէ նախարարապետ, շատ միտք յոգնեցնելու պէտք չ'ունին երկրին տրուելիք քաղաքականութեանը մասին, իրերու այս կացութեան հանդէպ բնական էր որ Տիգրան բաշայ ի խառնուածքը ունեցող մէկը չ'ունենար ո՛չ գործունեութեան լայն սահման և ո՛չ ալ երկար պաշտօնավարութիւն:

Անդլիացի հեղինակ մը Եգիպտոսի վրայ հրատարակած իր մէկ գործին մէջ, առանձին գլխոյ մը ներքեւ հրատարակած է՝ Եգիպտոսի քաղաքական կացութեանը շուրջ իր ունեցած մէկ տեսակցութիւնը Տիգրան բաշայի հետ: Հեղինակը մեծ գովելուով կը խօսի հայ պետական մարդուն մասին և կ'ըսէ, ի միջի տալոց.

— Տիգրան բաշայ ոչ միայն նուպարի փեսան է, այլ երկար Ժամանակէ ի վեր անոր քաղաքական ձեռնասունը. հիմայ գործնականապէս անոր յաջորդը եղաւ . . . Տիգրան ոչ միայն հին դպրոցէ չ'է, այլ կը պատկանի ամենէն նորագոյնին, թեթևասովի մէկը զինքը ձեռնիսկ դարավերջի կոչելու չափ առաջ պիտի կրնար երթալ . . . Սակայն և այնպէս մարդը էապէս հաւատարմօրէն Եգիպտոսի է որքան ղգացումներով նոյնքան ալ պաշտօնակիրներով, և իր հայկական «ծագման արտակարգ յարմարութեանը կը պարտի որ այսպէս անցնելով մէկէն եկած ծծած իւրացուցած է Եգիպտոսի ոգին ևս»

Տիգրան բաշայի ազգային կեանքին գալով, Գահիրէի Ազգային Երեսօրհանութեան Ժողովին մշտական Ատենապետն էր:

Թէ ինչպէս կարելի է «ընդունակ» ատենապետը ըլլալ սահմանադրական գաղութի մը, ասի կը բացատրուի երբ ըսեմ թէ՛ Եգիպտոսի գաղութին մէջ Սահմանադրութիւնը լոկ բառ մ'էր և իրականութեան մէջ Աղքատներու ունէր իր միւթէվէլլին և Գահիրէ ալ իրենը, որ էր Տիգրան բաշայ:

Տիգրան բաշայի մահուամբը Հայութիւնը կը կորսնցնէ իր ամենէն կարկառուն դէմքերէն մին: Հանգուցեալը կը կտակէ ազգին յիստուն հազար Ֆրանք:

ՅԱՐ. Լ. Ս. ՇԱՄԼՐԵԱՆ
31 Դեկ. 1908

(* տե՛ս) The New Egypt, a Social Sketch, By Francis Adams, Part II, The interview With Tirane Pasha.

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Ի ՆՊԱՍ ՀՍԱՍՏԱՆԻ ԹՈՎԵԼՈՅ

Նորին Վսեմութիւն Պոդու Փաշա Նուպարի Հովանաւորութեամբ ի նպաստ Հայաստանի սովեչոց կասարուած հանգանակութեան ցուցակը՝ որ ի հրատարակութիւն յրկուսէն մեզ, հետեւեալն է:

Ա. Ե. Բ. ՅԱՆԿ

Վ. Պոդու բաշա Նուպար	50000
» Երուանդ Աղաթոն Պէյ	2000
Տ. Մ. Անդրանիկեան	4000
» Պ. Կարապետեան	1000
» Օ. Գալլուպեան	200
Տիկ. Բ. Նահապետեան	1000
» Կատարինէ Ստեփանեան	487, 50
Տ. Գրիգոր Եղիաեան	2500
Արթուր Մեղքենեան	300
Մասուն. Արարատ Օթեակ	1000
Վ. Ս. Պէյ Թիւրապեան	195
Տիար. Մ. Զրաքեան	100
Մամսեան և Ընկ.	5000
Ոճն	292, 50
Տիարը Գ. Թովալեան	500
Խաչիկ Պաղտասարեան	500
Ե. Թարչուճեան	200
Բադարատ Եօրտամեան	200
Թովմաս Բրուտեան	195
Տելեմաք Բարթոզեան	100
Գումար	69770

Բ. ՅԱՆԿ

Տիկին Ն. Գարամաճեան	
(Ճնեալ Նուպար)	19500
Օր. Ինճի տ'Ապրո	
(Օր. Տիգրան բաշա)	7715
Տիարը Ա. Պրպեռեան	97, 50
Յակոբ Կոստյոշեան	100
Գասարճեան Եղարբ	200
Գասապեան Եղարբ	100
Սարգիս Ղազարուսեան	100
Ալթունեան Եղարբ	100
Ճիլան Հէքիմեան	200
Վ. և Արամ Հէքիմեան	100
Պաղտիկ Ղուկասեան	200
Սարգիս Գալֆաեան	40
Մկրտիչ Փափազեան	50
Խաչիկ Գուրեան	30
Միհրան Աթաբեկեան	20
Վահան Մանուկեան	100
Վ. Տանիսու բաշա	487, 50
Տիարը Ժան Տիրլիբ	400
Առաքել Փափազեան	400
Էտիառ Փափազեան	200
Գալլուպեան Եղարբ	500
Օրիանթալ Գարբըթ և Ընկ. (Ըսպարթալեան)	200
Ռաֆայէլ Սիւրբէս	2000
Մարիուս Երմէյլ	97, 50
Տր. Մաքս տը Գոլլալթօ (Progrés)	200
Ֆ. Անտրոբ	100
Գումար	33237
Գումար Ա. Յանկին	69770

Ղըշ. ողջ 103007, 50

23 Յունիւար 909

Մ. ԱՆԴՐԱՆԻԿԵԱՆ

ԲԱՅՈՒՄ Է ԲԱԳԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀՈՎԻՒԹ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1909 ՏԱՐԻՈՅ

Բաժանորդագիրը
Տարեկան 4 Բուրլի
Տեղաւիտայ 2 1/2 Բուրլի
Ապտակ բաժանորդագրութիւն
Չի ընդունվում.
Հասցէ Rédaction «HOVIVE»
Russie Tiflis
(Caucase)

ԳՐԻԳՈՐ ՏԷՐ ԵՈՎ ԼՍՆԵՆԷՍԵԱՆ
(Մուրացալ)

Թիֆլիզի մէջ նա հրատարակուիլ սկսած «ՄԻՏՔ» Շաբաթաբեր թիւի հետեւեալ ցուցակը ստոր կը կարդաւ, որոյ մասին որիչ խոյ թերթեր որոշ քան մը չ'գրեցին:

Վերջ մեք յիշեցինք թէ վայ նրան, ով «Մոդային» չի հետեւի, ընդհանուր հոսանքի հետ չի խառնուել աշխարհի ոտքերին տակ կը տրորուի, կը ոչնչացուի: Օրինակ էք ուզում: Մի քանի ամիս առաջ կատարի ամբողջի ու նրա առաջնորդներ յարձակումներ քից, հալածանքից, անզուսպ ու անատամ քննադատութիւնից ազատուելու համար ինքզինքը նետեց Տիֆլիսի Միքայէլեան հիւանդանոցի հոգեկան հիւանդանոցի բուժանուէրը (յիմարանոց) մեր ազգին ամենալուսազոյն զաւակներից մէկը՝ հանրածանօթ վրայագիր-բանաստեղծ Գրիգոր Տէր-Եովաննիսեան—Մուրացանը, որի կրած նեղութիւնքն ու հալածանքը մի հաստափոր հատոր կը կազմէին, եթէ գրի առնող լինի: Չէ՞ որ այս գրական հակայ գործիչն էլ զո՞ն եղաւ խուժանի ու նրա առաջնորդների «ախրճակին» որոնց հետ համակարծիք, զաղափարակից շինելու դժբախտութիւնը չունեցաւ անուանի վրայասանը զվախճան իւր կենաց . . . Այսպիսով նա դառաւ մի կանուղ փուշ իւր հակապետերի, ու խուժանի աչքում . . . Հէնց այդքանն էլ բաւական էր, որ սկսուէր նրա դէմ երկարատեւ կատարի կռիւ թէ մամուլի էջերում և թէ մանաւանդ ժողովրդի մէջ:

Եւ մեծանունը զորով լաւ գիտակցելով իւր անելի վիճակը՝ խեղդուելու ժամանակ ձեռք երկայնեց յարդին . . . —նա ամբողջ «գրատատանից» ազատուելու համար փոխուստի դիմեց . . . իր ժամանակ հետամուտ եղաւ նրան իւր ճանկը գցելու . . . Զո՞նք բաղինց առաջին հանդիպող դուրս, որ էր հոգեկան հիւանդանոցի բուժարանը . . . Նա սրան մի իրան փրկուած դնաց այդանց վասնորի այդանցի բնակիչներն աւելի ազնիւ, աւելի խղճով էին քան իւր ողջ կեանքի բնթաքում անստանալը . . . Դժբազգ հիւանդանոցը գրկաբաց ընդունեցին նրան, գուրգուրացին, սիրեցին նորեկ «խելօք գծին» . . . Մուրացանը սիրելի գործաւ ամենքին, հիմա ոչ ոք նրան վերաւորանք, անտեղի անպատուութիւն չի հասցնում. հիւանդանոցի տեսուչը՝ մարդասէր բժշկապետ Գ. Յ. Օրբէլին հայրական գուրգուրանքներով ու սիրալիւր, մեղմ վերաբերմունքով մեղմացնում էր իւր գոթազգ արեւնակցի Մուրացանի երկրաւոր տանջաքները, ցաւերն ու բիւր վշտերը . . . Նա շարունակ մրմնջում էր իւր «ընկերներին» մօտ մեր խնկելի Մ. Արեւնասցու «Ողբում դեղը Հայոց աշխարհ» —ը, ու ամենքին ներում, թողութիւն տալով բոլորի կամայ և սկամայ գործած մեղքերին . . . —նա ներում էր իւր անհայտ թշնամիներին, թէեւ վերջիններին «ուխտ» աւելի հաստատուն էր, նորք՝ փոխադարձաբար չպիտի ներեն Մ. —նի չգործած յանձանքը . . . մինչև վերջ պիտի կռուէին նրա ստուերի դէմ անգամ . . .

Մուրացանը ամեն վիշտ ու հալածանք իսպառ մոռցած՝ իսաղաղ ի Տէր հանդիւս . . .

ԱՍՏՈՆ ԼՈՅՐՆԵՍ

Աստղիկը չի յերկնից սասանեալ ընդ միշտ Դարերէ ի վեր ծիւր գաւ ու վիշտ . Գիշերը անկողն ցերեկն Արեւի Ետնն անսած ևս՝ հսկի վշտայի :

Ո՛ր զայն հերոս . ո՛ր եւ զիւր զայնք Զի կա՛յ յաշխարհի մի ո՛ր անձնուր . Խղճա՛ր , պիտիկ զքար իւր վերայ՝ Փարսպէր վերելու վեց հարիւր անկայ :

Նայեցայ վերեւ անկերու կողմէն Կիկն մը անսած շար՝ ծով ծով վիշտերէն . Մօ՛ւ մը ըզմակէր ունէր ևս առի Կոյրար մի՛շտ կոյրար առիւն իրախիսի :

Դարերու ցախէն ևս չէր ծերացած Ոսկեհիւս մազեր պայծառ զեղապսած . Անկերու ծոցէն հետսրիս ես՝ Հարցուցի իրեն Տիկի՛ն , դու ո՛վ ես :

Շրշուրուրը ևս՝ դեպի իմ ձայնիկն Սգաւորի պէս արցունք աչքերէն . Նայեցաւ վեր վար , աչքիկն ու անդիկն Պահուած սեաւ զիս անկերու ետնն :

Թանձր անկերու ծայրերու մէջէն Հազիւ , շեշի ձայնով մը երկրէն , Կորուսի փառքեր քաղ ու գաւախներ Աւերակ դարձան Հայրենի տունէր :

Կուշա՛ւ , կը հեծեւ , չ՛ունիս օգնական՝ Խուշ եւ անգուր ք Մեծն Երուսալէմ . Խաչ , Աւեսարան սուկ ինձ պահապան Մնացի աշպիս անկեր սիրական :

Խոյնոտուր զաւիպս՝ բանն ու կախաղան Արեւն ծով դարձաւ անբոյր Հայրասան . Եփրատ ու Տիգրիս աշծուրի ձորոյս . Կարեւրաբար հոսեւ քոց ու մոխս :

Ո՛վ աչիկն Հայոց դու շատ քարձր ես՝ Խօսէ՛ Աստուծոյ , թա՛ւ ք հեծեւ ես . Շողայ հուր կայծակ քշխալեաց զիսիկն Փոկի՛ , ազատէ՛ . Հայկայ՝ սերունդիկն :

Անկերու մէջէն Երկնից քարձուցիկն Արձագանգ տուա յաղբակներէն . Հստեցան աղօթք . յաց ու հեկեկակն Բեզ յիս պիտ՝ տունիկն վաղեմի պերճակն :

Որոսաց Երկնից գոռացիկն անկեր Կան բունկալիկն եղաւ հիւնաւեր . Հնչեց մեծաղոս փողն ազատութեան Որախացի դու , ո՛վ Մայր Հայրասան :

ՄՍՄՍՍ Յ . 2010.7.6.ԱՆ
ԱՍՏՈՆ-ԱՊՍՏՈՆ
1908 Նոյ . 1

տար ինչ կայ որ աշխարհի վրայ : Զը- սե՛նք հիմա որ ատոր պէս վարդապետ- ները ոչխար մը անգամ չեն արծիւր , Ե- թէ նոյն իսկ Բասաւիս փախած ըլ- լան . . . :

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԵՐ
« Միութենը զօրութիւն է » ը- սած են , եւ այս՝ շատ մը լաւ , եւ նոյն իսկ գէշ ձեռնարկներու մէջ իրեն վե- րագրուած յատկութիւնը արգարացու- ցած է :

Գէթ սա՛ հանգանակութեանց մէջ սակայն այդ սկզբունքին չի հետեւե- ցանք . եւ ասիկայ նուազ նկատելի թե- րութիւններէն չէ հայերու համար :

Արդէն Ն . Վ . Պօղոս բայտ Մեծ Հանգանակութեան մը ձեռնարկած է . սակայն չենք գիտեր ինչո՞ւ եւ ի՞նչպէս կըլլայ որ հանգանակութիւններու հե- ղեղան մը եղբայրահայերը քշելու տա- նելու վրայ է :

Անցեալ օր բարեկամներ կ'ըսէին . « Աղբա՛ր , առ ի՞նչ է : Բանի մը ժամ հազիւ կայ որ « Մեծ հանգանակութեան » ներկայացուցիչները եկան եւ մեր նը- լէրները յժարախաւ տուինք :

Հիմա ալ քանի մը Տիկիներն , Ա- ուջնորդարանէն վաւերացեալ ժապա- լինեալ տոմար մը ձեռքերնին՝ նորէն հանգանակութիւն կ'ընեն միեւնոյն նպատակաւ : Արդեօք բայտն , որ մեր Երեւոյիս ժողովոյ Ատենապետն ալ է կամ Հ . Բ . Ը . Միութեան յարգելի անդամները , Առաջնորդարանին գիտ- ցուցած չէ՞ին իրենց բացած հանգանա- կութիւնը , կամ Առաջնորդարանը ուղ- զակի եւ անուղղակի տեղեկութեան չըս- տացա՞ւ արդէն Մեծ Հանգանակութեան մասին : » Հո՛ս ալ միութիւնը զօրու- թիւն չ'պիտի՛ ըլլար :

ՄԻՆԵՄԱԹՕՎՐԱՔ
Վ Է Ն Ի Ի Ս

ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ ԵՐՈՒԱՆԴ ԳԱՍՏԵԱՆ
Պուրազի անանկատան զինաց քրտակիչի գծիկն վրայ

Առաջիկայ Երկուշաբթի Փետր . 1էն մինչեւ Կիրակի ամէն օր ժամը 6ին եւ 9ին (Յ . Մ .) հետեւեալ քրտակիչով . Ա . մաս . - 1 . Այցելութիւն մը զէպի Սթոքհոլմ . 2 . Պօքէրի գուրը (պատմական) 3 . Սէր ամէն ասորիքի մէջ (գուտարձակիք)

Բ . Մաս . - 1 . Արկածախնդիր կի- նը (տոմար) 2 . Մոգական մկրտող (ֆան- թէզի) 3 . Մաս . - 1 . Եունի գող (գօմիք) 2 . Փոքրիկ ածաբարուհին (տոմար) 3 . Բազմազանութեան ձանձրոյթը (խիստ ծիծաղաշարժ տեսարան) :

ՆԱՄԱԿ ԱՐԱՐԿԻՐԷՆ

Անկողմակալութիւնը պարտք կը գնէ մեր վրայ հրատարակել հետեւե- եալ գրութիւնը , որ պատասխանն է « Արշալոյս » ի 514 - 43 թիւով հրատարակուած նամակի մը :

Մենք չենք հաւանիր որ Արաբ- կիրցիները՝ իրենց քոյրերուն ու եղ- բայրներուն , մայրերուն ու ծերերուն արդի թշուառագոյն վիճակին մէջ , անոնց սիրտնալիքն վրայ մտածելը մէկ կողմ թողլով , ելլեն հասու- լական հաշիւներով զբաղին եւ վիճին իրարու հետ :

Տխուր է այս վիճակը և ո՛չ նե- րելի : Կը խնդրենք մեր հայրենակից- ներէն որ սիրով ապրին . հեռի մնան ինչ ինչ դիտուածներով պիտար հա- լածելէ , երբ գերագոյն պատճառ մը գոյութիւն չունի . . . :

Միացէ՛ք , միացէ՛ք Արաբ- կիրցիներ , և դարձանել փութացէ՛ք այն խորունկ վէրքերը և այն բոլոր թշուառութիւնները որ Ձեր մօտ՝ ձեր աչքին առջև են , և թերեւս ատենք , ծնունդ եղած ըլլան տեսակ մը հաշիւներու , որ երկրի շատ մը կողմերը իրենց գոյութիւնը ցոյց տուած են . . . : Ու երբ հաստատենք թէ սէրը կը տիրէ ձեր մէջ , այն ատեն մենք ալ գոհ պիտի մնանք . . . : ԻՄԲ .

ՊՍՏՈՒՆ
Նամակ Արաբկիրէ Վերնագրով 514-43 թիւ « Արշալոյս » ի նամա- կագրին :

Յարգելի նամակագիր . Զեր այն տողերը , որ հայրե- նասէրի մը զգացումով լեցուած կե- րէք համայնքին , սակայն ինծի և ինծի պէտքերու համար անձնական ատելութեան մը արդիւնքն էր և ոչ սուրբ բան . և եթէ Ձեր դիմակը պարզած ըլլայիք՝ անշուշտ Ձեր դէմ ալ անձնական ատելութիւններով զինուած կենսագրականներ ի լոյս պիտի նետուէին :

Արդարեւ իրաւունքը պիտի ու- նենայիք , եթէ Ձեր անձին պէս սու- ռիչ մ'ալ Ք . Ե . Պատմաճեանի վա- տասիրտ ու Գայմաղամի օգնական Սարիմ էֆէնտիի մանրանկար ըլլա- լը հաստատէր . և երկրորդ Ձեր բերանէն պոռթկացած այն անկ- չիւ բառերը անշուշտ Ձեր անցեալի մէջ գործած ու իրականացած բաներ պէտք է ըլլան :

Ք . Ե . Պատմաճեան բոլորու- վին հակառակն է Ձեր գրածներուն , որ կապացուցանէ բոլոր աղքն ու ժողովուրդը . և դուք դիտուումաւոր գրուած քննարկով ի զուր կ'ամբաստու- նէք Ձեր հայրենակիցը , որ մինչ ցարդ ժողովուրդին ու աղքին օգ- տակար եղած է իր դիտութեամբը և աշխատութեամբը : Եւ այդ պիտի բացատրուի այն ատեն երբ Ձեր ստո- րագրութիւնը բացորոշ կերպով պար- չուի :

Միայն դուք էք որ դիմակով մը պատասպանուած և կամ աւելի ճիշտը զրահ մը հագած՝ Ձեր անձ- նական թշնամին կուղէք հարուս- ձեւ մէջ նետելով այրիներու ու չեմ՝ դիտեր ինչերու ըրած բռնաբարու- թիւնները . բայց բոլոր բազաքը կըր- նայ վկայել այդ խօսքերուն անհիմն ըլլալը . մինչդեռ դուք առանց խըպ- նելու Ձեր անցեալին մէջ գործած արարքներն կը կեդրոնացնէք այն տեսակ երիտասարդի մը վրայ , որ քիչ վերջ թերեւ Արաբկիրի պար- ծանքը պիտի ըլլայ :

Եւ եթէ ստուգութիւն մ'էր Ձեր գրածը , ինչո՞ւ դիմակով մը կը խօ- սէիք և տոտր իբր ապացոյց ու- ըրիչ բաներ մէջ նետել աւելորդ կը համարիս , որովհետեւ երբ դուք Ձեր կեղծ դիմակը վար առնելով Ձեր ա- նունը զեռնալէիք , այն ժամանակ մենք

Ա. Զ. Գ. Ա. Ե. Ի. Ն
Լ Ո Յ Ր Ն Ե

Կ. Պօլսոյ Ռուսական Հիւպատոսի փոխանորդը , թարգմանի մը հետ Պատ- րիարքարան գալով , ի պաշտօնէ հազար- ցած է Իզմիրիւն Սրբազանին , Օգոստոս- փառ Զարին կողմէ վաւերացուած ըլ- լալը իր ընտրութիւնը :

Մենք այ սրագրին կը շնորհաւո- րենք այս անգամ նորին վեհափառու- թիւնը , եւ կը մաղթենք որ իր գաղա- փարներուն համաձայնող աջակիցներով ընդհանուր ազգին երախտագիտութեան և գոհունակութեան արժանանայ : Բա- ւական չէ ովսանաններով Պատրիար- քական կամ կաթողիկոսական Գահ հրա- լերու ըլլալ : Պէտք է Հայութեան զէպի այս դերագոյն Աթոռները սածած բոլոր յոյսերը արգարանան :

Կը սիրենք յուսալ թէ՛ մեր նո- րընտիր վեհափառը , Իզմիրիւն Մատ- թէոս Բ . Կաթողիկոս ամենայն հայոց , միակը պիտի ըլլայ նոյն իսկ իր բոլոր

նախորդներուն մէջ ալ , որ պիտի կարե- նայ ազգին բոլոր յոյսերը իրազորելու :

Մեր սրագրին խնդակցութիւննե- րը չ'պիտի կարենանք զսպել այս վեր- ջին պարագային մէջ , եւ երջանկու- թիւնը պիտի ունենանք անշուշտ յայ- տարարելու թէ՛ անտանելիօրէն խոչ- տանողուած զժբազդ ազգի մը ճակատա- գիրը միմիայն նորընտիր վեհափառն էր որ կրցաւ յարգարուն ուղիք մը մէջ զնել եւ ապահով հանգրուան մը առաջ- նորդել :

ՓԱՆՈՒՍ
« Հովիւ քաջ զանձն իւր գնէ ի վերայ ոչխարաց » . տեսա՞ք մեր Պիթիւսի ա- ուջնորդ Եգիպտոսի վարդապետ Գալիար- ճեանը , իր անձը իր ոչխարներուն վրայ զնելու տեղ , Պօլսոյ նաւամատոյցի քա- րերուն վրայ գրած՝ եւ նաու մը մէջ նետուելով՝ ուղղակի Բատուիա փախած է , կը գրեն Պոյական թերթերէ ոմանքս : Պապո՞ւ վարդապետ , մեռնէիք պէ՛ , Գու ոչխարներէդ այդպի վախճալու ի՞նչ ունէիք որ , ոչխարներուն պէս հեզ , նամես , կամակատար ու հաճոյակա-

Տ Ի Ո Ւ Ի Ր Ժ Պ Ի Տ
Ի Ն Պ Ա Ս Տ Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ս Ո Վ Ե Լ Ո Յ

« Արշալոյս » ի Տպարանէն լոյս տեսաւ « ՏԻՈՒԻ ԺՊԻՏ » անունով գրքոյկ մը մօտ 200 էջերէ բազկացեալ , մաքուր թղթի վրայ և խնամեալ տը- պագրութեամբ , 14 Եգիպտահայ կարևոր գէմքերու գեղատիպ պատկերներով և արթիւրիկ կողով մը՝ որ Հայաստանի կարօտեալները կը պատկերացնէ : Յատուկ Մասնախումբ մը կազմուած է , որուն Գանձապետն է Աղոնաչուք Սեդրաք էֆէնտի Դաւիթեան , որուն պէտք է ուղղել նուէրներն , ի Տայրէ Տիգրան Փաշա , իսկ ձեռքէ գնել ուղղները՝ պէտք է դիմեն Պապ-էլ-Խալէ Կուլէնօրայի դիմաց Պերպերեան Եղբարց վաճառատունը : 2-4

ՄԵԾ ՎԱՃԱՌՄՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԵԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԶ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ՅԱՏԿԱՆՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է.

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի ածան գներով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ աւելի՝ պէտք է նախընտրել մեր վաճառատունը .

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամափաճառ ըլլալու . բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատեղին .

Պարկական ամենաընտիր թէմպէքիի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ դնելը պարզապէս սխալի է .

Մեր վաճառատունը վերջապէս, գիներու ածանուծեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մանաւանդ գործածել որոշած ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անսխալ սպաւորոյններէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրըստօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են .

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԲ

ալ Ձեր կենսագրականով սխալներ պիտի չընենք, յայտնի է որ դուք ալ տարակուսելով Ձեր գրուածքին վրայ միակ միջոցը կեղծ անունը գտաք զոր ինքնին կեղծ ըլլալը երևան կը հասնէ .

Արդ ազատութիւնը վե՛հ օգէն ոգևորուած կուգամ խրատել ու ըսել թէ անձնական ատելութեամբ մը լեցուած քանի մը տողեր շարելը ազգասիրութեան մը չէ և ոչ ալ կեղծ անունով մը կոշուելէ մեծութիւն .

Առ այս. այժմ այսչափ ինչ բաւ համարել .

Յարգանք

ՎԱԿԱՐՇԱԿ ՊԱՐՄԻԿԱՆ

27 Նոյեմ. 1908

Արաբկիր

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

ԵԳԻՊՏՈՍԻ

ԳԻՒՆՆ ԳՍՂ. ԺՈՂՈՎՈՑ

Ա.ՁԳ. ԳՍԻ. ՎԱՐՁՈՒԹՅԱՆ

Թիի 805

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՍՀԻՐԷԻ ՀԱՅՈՑ

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆԻՆ

Գահիրէի հայոց Առաջնորդականը այսու կը յայտարարէ թէ Քաւրաքի Ս. Առուածածին Եկեղեցւոյ սեփական և Եգիպտոսի Պէ՛հէրայի Միտիրիէթին Քաֆր Տաւուար Մէրքէզին Սիտի Ղազի զիւղին մէջ, Պէ՛սլաուուի մօտ, 984 Ֆէտտան 3 գրաթ և 20 սէհիմ գետինը հինգ վայրկեան հետէ Մասրաֆ նուպարիէ ըսուած կայարանէն, որ կը գտնուի Քաֆր Տաւուարէն Տամանհուր տանող Տէլժա Լայթի երկաթուղու վրայ .

Այս գետինը գնել վաճառողը պէտք է որ տեղւոյն պահապան Մուհամմէտ Ապտուլլահի առաջնորդութեամբ հողը այցելեն ու քննեն. որով ետքը իրենց offerը կրնան ներկայացնել և ստորագրել աճուրդի Գայմէին ներքև և իրենց առաջարկելիք գնոյն 10 ա.Օ/Օը հնչուն դրամով իրր ապահովութիւն պէտք է յանձնեն Առաջնորդարանին և կամ քաղաքի անուանի պանդաներէն մէկուն մէջ գտնուող յանուն Առաջնորդարանին տէֆօ ընեն և ընկալազիւրն յանձնեն Առաջնորդարանին .

Թուականէս սկսեալ մինչև երեք ամիս, պայմանաժամ սահմանուած է այս offerները ընդունելու համար .

Այդ ժամանակահատիցին մէջ գնել փափագողը վաճառման պայմաններուն կրնան տեղեկանալ կիրակի և ուրիշ օրերէ զատ ամէն օր առաւօտեան ժամը 9-12 և իրիկունը ժամը 3-5, Առաջնորդարանին Գիւանատան մէջ ի Պէ՛ն Էլ Սուրէն Գահիրէի .

Առաջնորդարանս իրեն կը վերապահէ առաջարկելի ո՛ր և է գին (offre) ընդունելու կամ մերժելու իրաւունքը, մերժման պարագային offer ներկայացնողը Առաջնորդարանէ ոչինչ պահանջելու իրաւունք ունի, ի բաց առեալ իր տուած ապահովութեան գումարը, որ իրեն կը վերադառնայ .

Առաջնորդական փոխանորդ Յարութիւն Քահ. Յակոբեան 12 Դեկտ. 1908

ՈՐՄԱՐ

ԳԵՈՐԳ ԱԼԱՃԱՃԵԱՆ

Կը հայրաքյրէ ճուճեր, դրսնական փոխառութիւններ և կանաւորեալ սեմեակներ .

Իր կեդրոնտեղին է Պազոր Մուրուրի գրան քովի երկու սրճարանները ամէն օր ժամը 7 էն մինչև 12 կէս օրէն առաջ, և ժամը 2 էն 3ը կէս օրէն յետոյ .

ԵՄԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

« Արշալոյս » Խոյարանին մէջ, Շէրիֆ քաջայի պարտէզին դիմաց՝ կը վաճառուին նետեւեալ պրօշիւրները .

Ո. ՊԱԼԵԱՆ

ԺՈՂՈՎՈՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ

« 2 Հիւլէն 50 »

Թիւ 3 պրօշիւրը թէև հրաշալիք մը բայց ինչ ինչ նկատուներով զանց կընենք անունը յիշատակել կարճ ժամանակի մը համար . գինն է մէկ ֆրանք . Դիմել Արշալոյսի կամ պարտէզին զատ Հեղինակին հասցէին որ է .

Mr. A. Balian

Le Caire

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց . Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օթէլի ճիշտ դիմաց, Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հիւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ՔԱՂԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄՍՍԵԱՃԻՎԵՐ ՈՒՆԻ

Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները Մինկէրներն են և ասոնցմէ մինչև ցարդ 17,000,000 ծախուած է .


400 հ աւելի վիսյակն են մեքենաներով վարձատրուած, Սրաշխարհայ մեքենաներ,

ԱՄԵՆԷՆ ՄԵԾ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերակաւն արուեստահանդիսին մէջ ստացած է .
ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ
ԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ
ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆՏԻՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զոչնաւալ, ուշագրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ Մինկէրի յատկանշիմ



Ձեր դասեր և նորոգութիւններ, Մինկէր մեքենայից համար, յաճախորդատուներուն մէջ .

Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւնրու և նորոգութիւն ամեն կարգի մեքենայից

Գին ՉԱՓԱՒՈՐ

ՕԹԷԼ ՏՐԱՊԷԶՈՆ

ԱՂԷՔՍԱՆԴՐՈՒ

Քանթօ, Սուգուլ Մանկափ 3 Թէֆֆիթը-Էլ-Քալչանի փողոց 3 Մանկափ Մզկիթին դիմաց, Թիւ 3 Պանդոկապետ - Մ. Գէսրգեան

Կը յանձնարարուի արգոյ հասարակութեան և ի մասնաւորի մեր հայրենակիցներուն քաղաքին կեդրոնը գտնուող և օգուէտ զիրքով սոյն պանդոկը, ուր յաճախողները պիտի գտնեն կատարեալ մաքրութիւն և փութական սպասարկութիւն .

Դիմեցէք անգամ մը և զո՛հ պիտի մնաք .

Դիմելը չափաւոր են .

28-55

ԿԱՐՆԻՈՐ ԱՁԴ

Գաւառներու համար Գործակալներու պէտք կայ զիմել թերթիս Խմբագրութեան հասցէին .

ՍԱՐԳԻՍ Յ. ԹԱՇՃԵԱՆ

Նորոգիչ կարի մեքենաներու, ֆոֆօկրաֆներու և կազի վառարաններու .

Տասներկու տարիներ « Մինկէր » Ընկերութեան քով մեքենայարարութեան զբաղելէ յետոյ, այժմ զինավաճառ Ջախարիա Գոնստանթնուի քով պաշտօնեայ է զէնքերու և մեքենայարարման ճիւղին մէջ .

Կարգ մը բարեկամ յաճախորդներու խնդրանաց վրայ, պաշտօնէն դուրս ունեցած իր պարագոյ ժամերը պիտի արամադրէ կարի մեքենաներու, ֆօֆօնօկրաֆներու, կազի վառարաններու, նորոգութեանց և յարգարման .

Առ այժմ իրեն պէտք ունեցողները փոխանակ հոս ու հոն թափառելու կրնան զիմել իր տունը Շարէ Մուհամմէտ Ալի Թաշ-Էլ Ռապէն կրնան հարցնել նաև Մեծ Սրճարան Հայկականի Տնօրէններուն, և դարձեալ զիւրութեան համար քաղթ բոստալով մը կրնան զիմել « Արշալոյսի » Տպարանին . նշանակելով իրենց հասցէն, փողոցին անունը և Տունին թիւը .

Իր նորոգութեանց վարձքը պիտի ստանայ իրեն յանձնուած աշխատութիւնները լրանալէ և փորձեր կատարուելէ յետոյ .

Կարի նոր մեքենաներ ալ կը վաճառէ .